

<https://doi.org/10.59982/18294359-25.1-as-15>

Անի Սամվելի Կոջոյան

ԵՊՀ, Թարգմանության, տեսության և պրակտիկայի ամբիոն

akojoyan@ysu.am

Ամփոփագիր

Վերջին տասնամյակներում գենդերային ապարտեղեկավորությունը վերածվել է ուսումնասիրության կարևոր առարկայի՝ որպես հանրային դիսկուրսում և քաղաքական տիրույթում կիրառվող գործիք: Այն դրսևորվում է ոչ միայն գաղափարական և բովանդակային, այլև՝ լեզվական և լեզվաոճական շերտերում: Սույն հոդվածը նպատակ ունի վերլուծել գենդերային ապարտեղեկավորության լեզվաոճական առանձնահատկությունները՝ հիմնվելով հայաստանյան հանրային դիսկուրսում տարածված օրինակների վրա:

Վերլուծության համար հիմք են հանդիսացել քաղաքական գործիչների ելույթներ, մեդիա հրապարակումներ և լրագրողական տեքստեր, որոնք վերաբերում են քաղաքական և հանրային ոլորտում գործող կանանց և վերջիններիս դեմ կիրառված ապարտեղեկավորական պատումներին: Մեթոդաբանական առումով կիրառվել է քննադատական դիսկուրսային և լեզվաոճական վերլուծության համադրական մոտեցումները:

Հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ գենդերի հիմքով ապարտեղեկավորական հռետորաբանության լեզվաոճական գործիքակազմում լայնորեն կիրառվում են փոխաբերություններ, համեմատություններ, չափազանցություններ, հեզնանք, բացասական մակդիրներ և պիտակավորումներ: Այս տեխնիկաները նպաստում են կանանց քաղաքական և մասնագիտական լեզվի մոլորության արժեզրկմանը, հանրային ընկալումներում գենդերային կարծրատիպերի վերարտադրմանը: Գենդերային ապարտեղեկավորությունը, որպես գործիք, օգտագործվում է տարբեր քաղաքական ուժերի կողմից՝ փոխադարձաբար միմյանց դեմ, իսկ մեդիան հաճախ հանդես է գալիս որպես ակտիվ վերարտադրող և տարածող:

Լեզվական և լեզվաոճական վերլուծությունը կարևոր միջոց է հանրային դիսկուրսում նման երևույթների բացահայտման, դրանց ազդեցության քննադատական գնահատման և հանրային հաղորդակցության մեջ հավասարության և հարգանքի սկզբունքների ամրապնդման ուղղությամբ հետագա քայլեր մշակելու համար:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր: Գենդերային ապատեղեկատվություն, քննադատական դիսկուրսային վերլուծություն, հանրային դիսկուրս, լեզվաոճական վերլուծություն, կին քաղաքական գործիչ, գենդերային կարծրատիպեր

Ներածություն

1990-ականներից սկսած առ այսօր գենդերային հիմնահարցերն ու խնդիրները շարունակում են մնալ հասարակական, քաղաքական և գիտական դիսկուրսների փոխհատման և քննարկման առարկա՝ թե՛ միջազգային, թե՛ տեղական մակարդակներում: Մասնավորապես, սոցիալական ցանցերի, զանգվածային լրատվամիջոցների և առցանց հարթակների, ինչպես նաև արհեստական բանականության գործիքակազմի լայնածավալ կիրառման արդյունքում զգալիորեն դյուրին, արագընթաց և հաճախ անկառավարելի է դարձել անձանց, այդ թվում՝ սեռի և գենդերի հիմքով, թիրախավորումը [Jankowicz]:

Գենդերի հիմքով հիմնականում անհամաչափորեն շատ ավելի թիրախավորվում են կանայք, հատկապես այն կանայք, որոնք ակտիվ հանրային կամ քաղաքական գործունեություն են ծավալում [Di Meo]: Նման դեպքերում թիրախավորումը ներառում է գենդերային կարծրատիպերի կիրառում, ատելության խոսք, ինչպես նաև գենդերային ապատեղեկատվության կիրառում: Վերջինս համեմատաբար ավելի նոր երևույթ է՝ հետազոտողների և քաղաքականություն մշակողների համար: Սա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ գենդերային ապատեղեկատվությունն ավելի բարդ կատեգորիա է՝ ի համեմատ գենդերային կարծրատիպերի և գենդերի հիմքով ատելության խոսքի, որոնց վերաբերյալ տարիներ շարունակ բազմաթիվ հետազոտություններ են կատարվել, զեկույցներ և քաղաքականության համառոտագրեր են մշակվել:

Թիրախավորման գործընթացում կիրառվում են լեզվաոճական տարաբնույթ հնարներ և մշտաշահարկող (մանիպուլյատիվ) մարտավարություններ, որոնք խորը ազդեցություն են թողնում հանրային ընկալումների և գենդերային դիսկուրսների ձևավորման վրա: Այս համատեքստում գենդերային դիսկուրսի լեզվաբանական ուսումնասիրությունը վերջին տասնամյակներում վերածվել է արդիական և կարևոր ուղղության՝ հումանիտար և սոցիալական գիտությունների խաչմերուկում. լեզուն հանդես է գալիս ոչ միայն հաղորդակցման միջոց, այլ նաև գաղափարներ, արժեքներ, վերաբերմունք, հանրային դիսկուրսներ, ուժ, իշխանություն և հիերարխիաներ վերարտադրող, հաստատող ու ամրապնդող գործիք, ինչպես նաև սոցիալական իրականություն ստեղծող միջոց [Litosseliti]:

Սույն հոդվածի **նպատակն** է ուսումնասիրել գենդերային ապատեղեկատվության դիսկուրսային և լեզվաոճական առանձնահատկությունները հանրային դիսկուրսում՝ վերլուծության համար նյութ դիտարկելով հայաստանյան քաղաքական գործիչների ելույթներից հատվածներ, մեդիա հրապարակումներ և լրագրողական տեքստեր, ուշադրություն դարձնելով ոչ միայն բառապաշարային և հռետորա-ոճաբանական

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

հնարների կիրառմանը, այլև դրանց վերարտադրած սոցիալ-լեզվաբանական գործառույթին, այն է՝ գենդերային կարծրատիպերի ամրապնդմանը և կանանց հասարակական դիրքի նվազեցմանը:

Վերլուծության համար **մեթոդաբանական հիմք** է հանդիսացել քննադատական դիսկուրսային վերլուծությունը, ինչպես նաև լեզվաոճական վերլուծությունը՝ ուղղահայաց և հորիզոնական համատեքստերի համադրությամբ:

Գենդերային ապատեղեկատվությունը, որպես հանրային դիսկուրսում և քաղաքական տիրույթում կանանց նկատմամբ կիրառվող ռազմավարական գործիք, **ուսումնասիրության համար արդիական թեմա** է՝ հաշվի առնելով քաղաքական գործընթացներում դրա դինամիկ աճող գործածությունը և կանանց մասնագիտական ու հանրային ընկալումների վրա ունեցած բացասական ազդեցությունը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է գենդերային ապատեղեկատվության՝ որպես հանրային և քաղաքական դիսկուրսում կիրառվող ռազմավարական գործիքի, լեզվաոճական դրսևորումների համակողմանի քննադատական և լեզվական վերլուծության մեջ՝ փոխհատական մոտեցմամբ համադրելով քննադատական դիսկուրսային վերլուծության և լեզվաոճական վերլուծության մեթոդները:

Որպես մեթոդաբանական հիմք, հարկ է սկսել գենդերային տեղեկատվություն եզրույթի սահմանումից: Այսպես, *գենդերային ապատեղեկատվությունը*, որը նաև հայտնի է որպես *գենդերի հիմքով ապատեղեկատվություն*, սահմանվում է որպես «տեղեկատվության» տեսակ, որը ենթադրում է անձի սեռի և/կամ գենդերի հիմքով կեղծ, ապակողմնորոշող կամ մտազդեցիկ ու մտաշահարկող տեղեկության թիրախային, կանխամտածված կամ գիտակցված ստեղծում և տարածում: Այլ կերպ ասած՝ այն կեղծ և ապակողմնորոշող բովանդակություն է, որը միտումնավոր տարածվում է հանրության լայն շրջանակներում՝ նպատակ ունենալով թիրախավորել, մոլորեցնել, արժեզրկել, նսեմացնել կամ վնասել անձին կամ անձանց խմբին՝ խտացնելով և կենտրոնացնելով ողջ ուշադրությունը տվյալ անձի սեռի և գենդերային հատկանիշների վրա [Kovacs], [Demos], [EU DisinfoLab], [Կոշոյան, Հովհաննիսյան]: Այսինքն, գենդերային ապատեղեկատվությունը դառնում է «*ռազմավարական գործիք*» թիրախում գտնվող անձին լռեցնելու համար:

“Global Engagement Center”-ը գենդերային ապատեղեկատվությունը դիտարկում է որպես կնատյացության և կանանց նկատմամբ բռնության դրսևորման ձևերից մեկը, որն օգտագործում է ապակողմնորոշող կամ մոլորեցնող գենդերային պատումներ, որոնք էլ հաճախ տարածվում են համակարգված ձևով, որպեսզի խոչընդոտեն կանանց ակտիվ մասնակցությունը քաղաքական և հանրային ոլորտներում [Global Engagement Center]: Այս ամենն իր հերթին ձևավորում է հանրային ընկալումներ, հաճախ՝ թյուրընկալումներ, ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների, կանանց իրավունքների, ինչպես նաև ժողովրդավարական հասարակություններում կնոջ տեղի և

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

դերի վերաբերյալ: Այս ամենը 21-րդ դարում տեղի է ունենում առցանց տիրույթներում, մասնավորապես՝ սոցիալական մեդիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, որի արդյունքում ակնթարթային արագությամբ տարածվում է ապատեղեկատվությունը, որն էլ վերարտադրում և ամրապնդում է մի շարք գենդերային կարծրատիպեր: Վերբալ և տեսողական դիսկուրսների և բովանդակության տարաբնույթ ձևաչափերի միջոցով դրանք լայնորեն տարածվում են հանրության շրջանում՝ ձևավորելով կանանց և տղամարդկանց հասարակական դերերի և նորմերի վերաբերյալ ընկալումներ: Ավելին, երբ այդ ապատեղեկատվության ստեղծողն ու տարածողը հանրային կերպար կամ քաղաքական գործիչ է լինում, հանրային ընկալումների ձևավորման և ազդեցության չափերն ինքնըստինքյան ավելի են մեծանում:

Հատկանշական է, որ գենդերային ապատեղեկատվությունն ունի ոչ միայն գաղափարական և բովանդակային, այլ նաև լեզվաոճական դրսևորում՝ ուղղված ոչ միայն գոյություն չունեցող փաստերի շահարկմանը կամ գոյություն ունեցող փաստերի խեղաթյուրմանը, այլ նաև՝ կնոջ կերպարի թիրախավորմանն ու արժեզրկմանը: Այս համատեքստում կարևոր է նաև նշել, որ գենդերային ապատեղեկատվությունը չի վերաբերում պարզապես սխալ կամ չափազանցված տեղեկության տարածմանը [Pennycook], [UN Women]. Խոսքը վերաբերում է կանխամտածված և դիտավորյալ ապատեղեկատվական գործունեությանը: Այս պարագայում, գենդերի հիմքով ապատեղեկատվության հիմնական նպատակը ոչ միայն հանրային կարծիքի մոլորեցումն է, այլև՝ տվյալ անձի, մասնավորապես՝ կնոջ, բարոյականության հատկանիշները, չափանիշները, արժանիքները, արժեքները, կարողությունները, սեռականությունը, հոգեկան առողջությունն ու արժանապատվությունը թիրախավորելն ու կասկածի տակ դնելը:

Գենդերային ապատեղեկատվությունը լայնորեն տարածում գտած գործիք է ամբողջ աշխարհում: Այս առումով հայաստանյան միջավայրը նույնպես բացառություն չէ: Քաղաքականության, իրավապաշտպանության կամ հանրային գործունեությամբ զբաղվող կանանց դեմ ուղղված ուղերձներն ընդգծվում են լեզվաոճական որոշակի առանձնահատկությամբ և գործիքակազմի կիրառմամբ:

Հայաստանյան հանրային դիսկուրսում գենդերային ապատեղեկատվության լեզվաոճական դրսևորումների բնութագրական օրինակ կարելի է դիտարկել ՀՀ վարչապետ պարոն Նիկոլ Փաշինյանի ելույթի հետևյալ հատվածը, որում վերջինս անդրադառնում է Ազգային ժողովի կին պատգամավոր տիկին Արմենուհի Կյուրեղյանի հայտարարությանը.

«Կին, երեք զավակների մայր Արմենուհի Կյուրեղյանն ասում է՝ մեր բակում ոչ միայն ասում են, այլև անում են. ի՞նչ: [...] Մեր բուհական համակարգի գիտական կոնսերնորը 90-ականներից պակասել է, ու եկել է այս գողական կոնսերնորը՝ «մեր դեկանատի դեմը ինչ-որ ասվում է, դա էլ արվում է»: Ու այս մարդիկ խոսում են

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

բուհական համակարգից [...] բա պիտի Արմենուիի Կյուրեղյանն էլ ասեր՝ «մեր բակում ոչ միայն ասում են, այլ նաև անում են!»»:

Այս հատվածում կարելի է արձանագրել *գենդերային ապատեղեկատվության հետևյալ բովանդակային և իմաստաբանական շերտերը*: Այսպես, պատգամավորի կարգավիճակն առաջին հերթին ներկայացվում է ընտանեկան կարգավիճակի և սոցիալական դերի (մայրություն) միջոցով՝ «*կին, երեք զավակների մայր*», ինչը հանրային ընկալման մեջ երկրորդականացնում է նրա քաղաքական գործողության և մասնագիտական դերը: Երկրորդ, կնոջ արտահայտած կարծիքը ներկայացվում է հեգնանքով և կենցաղայնացված լեզվի տեխնիկայի կիրառման միջոցով՝ նվազեցնելով դրա լրջության մակարդակը և տեղակայելով այն ոչ պաշտոնական, բակային խոսույթի տիրույթում: Ավելին, կին պատգամավորի ասածի շուրջ կառուցվում է «*գողական կոնտենտ*», «*բակի կանոններ*», «*ֆրֆռալ*» փոխաբերական դաշտ, ինչը կարող է նպաստել լայն հանրության շրջանում վերջինիս մասնագիտական հեղինակության արժեզրկմանը:

Լեզվական և լեզվաոճական առանձնահատկությունների առումով բառապաշարային մակարդակում օգտագործվում են «*բակում*», «*գողական*», «*ֆրֆռալ*», «*բակի կանոններ*», «*ժորիկ*», «*Գևորիկ*» բառեր և բառարտահայտություններ, որոնք խիստ կենցաղային և բացասական ներիմաստներ են հաղորդում բովանդակությանը:

Հեգնանքն ու պաթոսը կառուցում են հաղորդման գլխավոր տոնայնությունը՝ «*ի՞նչ*», «*բա պիտի ասեր...*», «*այս մարդիկ խոսում են...*» ձևակերպումների միջոցով: Իսկ փոխաբերական համեմատությունները, ինչպիսիք են՝ «*գողական կոնտենտ*», «*բակի կանոններ*», նպաստում են կին քաղաքական գործչի արտահայտած մտքի արժեզրկմանը:

Ընդհանուր դիսկուրսային կառուցվածքն ուղղված է կին գործչին հանրային քաղաքական բանավեճից դուրս մղելուն՝ նրա խոսքը ներկայացնելով որպես ոչ համարժեք, ոչ լուրջ և ոչ արժանի հանրային հնչեղության:

Գենդերային ապատեղեկատվության լեզվաոճական դրսևորումները կարող են տարածվել են ոչ միայն պաշտոնական հոռատորաբանության, այլև մեդիայի կողմից՝ լրագրողական մեկնաբանական, հաճախ՝ անանուն, տեքստերի միջոցով: Դրանցում լրագրողը հանդես է գալիս ոչ թե որպես չեզոք տեղեկատվության հաղորդող-ներկայացնող, այլ՝ որպես ապատեղեկատվական դիսկուրսի տարածող:

Նման մի բնորոշ օրինակ է «*Ով է քաղաքապետարանի վերահսկողության վարչության նոր պետը*» վերնագրով հրապարակումը: Ստորև ներկայացնում ենք տեքստի համապատասխան հատվածը.

«Շուրջ երկու շաբաթ թափուր մնացած Երևանի քաղաքապետարանի վերահսկողության վարչության պետի պաշտոնում օրերս ժամանակավոր

¹ Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://armtimes.com/hy/article/284650>: [Մուտք՝ 30.03.2025]

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

պաշտոնակատար է նշանակվել երիտասարդ Աննա Գևորգյանը, որը քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանի մյերիմն է և թերևս այդ առաքելության համար էլ նշանակվել է այդ պաշտոնում: Վերահսկողության նախկին պետն Արթուր Ավետիսյանն ազատվել է զբաղեցրած այս տարվա հունվարի 31-ին:

Ավետիսյանը վերահսկողության վարչության պետ էր նշանակվել 2019 թվականի ապրիլին: Վերջինս 2018 թվականի հոկտեմբերի 9-ից դեկտեմբերի 5-ը զբաղեցրել է ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության պետի պաշտոնը: Իսկ 2018 թվականի դեկտեմբերին նշանակվել էր Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար»²:

Բովանդակային առումով տեքստը կառուցվում է մի շարք գաղափարական ենթաշերտերի շուրջ, որոնք ծառայում են կնոջ մասնագիտական արժեքը, անկախ գործունեությունը կասկածի տակ դնելու նպատակին:

Նախ, տիկին Աննա Գևորգյանի անձնական կարգավիճակը շեշտադրվում է ոչ թե նրա մասնագիտական որակավորման կամ փորձառության միջոցով, այլ՝ վերջինիս տարիքի և սեռի (այն է՝ *երիտասարդ կին*) և անձնական կապերի կամ հարաբերությունների միջոցով՝ «*մյերիմն է... թերևս այդ առաքելության համար էլ...*»: Այսպիսի ձևակերպումը ստեղծում է ոչ օրինական առաջխաղացման ընկալում՝ խաթարելով կնոջ քաղաքական կամ մասնագիտական գործողության ընկալումը:

Նախկին (տղամարդ) պաշտոնյայի կենսագրական մանրամասն ներկայացումը (պաշտոններ, տարիներ, մասնագիտական գործունեության ուղի) նպատակ ունի ի հակադրություն ձևավորել *դիմագիծ՝ նախկին բարձր պրոֆեսիոնալ համակարգի փոխարեն այժմ «անփորձ», «անձնական կապերով»* նշանակված *կին պաշտոնյա*: Սա դասական մեդիա ապատեղեկատվական հնարք է՝ կառուցված համեմատական արժեզրկման տրամաբանությամբ:

Լեզվական մակարդակում օգտագործված են հստակ *լեզվական մակարդակում կողավորված ձևակերպումներ*, օրինակ՝ «*երիտասարդ*», «*մյերիմն*», «*թերևս այդ առաքելության համար...*», որոնք ուղղված են կասկածի մթնոլորտ ստեղծելուն: Այդ ձևակերպումները չունեն փաստական հիմնավորում, բացակայում են հղումներ՝ պաշտոնական տվյալների և չարաշահումների վերաբերյալ, օրինակ՝ նեպոտիզմի կամ ֆավորիտիզմի տեսքով, ինչն ապատեղեկատվական դիսկուրսին բնորոշ հատկանիշ է:

Այս օրինակը ցույց է տալիս, որ մեդիայի ապատեղեկատվական դիսկուրսներում գենդերային բաղադրիչը հաճախ արտահայտվում է կանանց պաշտոնական

² Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://hraparak.am/post/d0a1577168cdfa73873f38ecadcb3f61>: [Մուտք՝ 30.03.2025]

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

առաջխաղացման ներկայացման գործընթացում՝ դրանց հիմքում կնոջ միայն սեռը, անձնական կապերը կամ հարաբերությունների ենթատեքստ ներմուծելով: Այս դեպքում ևս կնոջ նկատմամբ հանրային դիսկուրսում շարունակում է գործածվել համակարգված գենդերի հիմքով ապատեղեկատվություն, որն ուղղված է վերջինիս հասարակական դիրքի արժեզրկմանը, քաղաքական կամ մասնագիտական լեգիտիմության թուլացմանը և գենդերային կարծրատիպերի վերարտադրությանը:

Գենդերային ապատեղեկատվության և գենդերի հիմքով ապատեղեկատվական հոեոտորաբանության տարրերը հաճախ քաղաքական դիսկուրսում հանդես են գալիս ոչ միայն պաշտոնական ելույթների մակարդակում, այլև մեդիայի կողմից այդ ապատեղեկատվության վերարտադրության միջոցով: Դրա բնորոշ օրինակը կարելի է դիտարկել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար պարոն Արթուր Հովհաննիսյանի հայտարարություններում, որոնք ամբողջական ծավալով վերարտադրվել են տեղական լրատվամիջոցում առանց որևէ քննադատական-վերլուծական մեկնաբանության.

«Օրինակ, դաշնակ Լիլիթ Գալստյանը իբրև թե վեհ արժեքներից է խոսում [...] էդ լո՞ւրջ եք ասում, տիկին Գալստյան, մի հատ մտածեք, նոր խոսեք, խնդրում եմ... հո դուք ղառ-ղառ չեք, հարգելի ընդդիմություն [...] հո դուք ջադու չեք [...] դուք քաղաքական ընդդիմություն եք, խոսեք քաղաքական լեքսիկոնով [...]:»³

Բովանդակային մակարդակում Հովհաննիսյանի հայտարարությունները արժեզրկում են ընդդիմադիր կին պատգամավորների խոսքը՝ դրանք ներկայացնելով իբրև չմտածված, մակերեսային և հանրային վտանգ ներկայացնող: Կանանց դեմ ուղղված հատվածում՝ «տիկին Գալստյան, մի հատ մտածեք, նոր խոսեք», դիտվում է դասական հայրիշխանական հոեոտորաբանություն, որով կին քաղաքական գործչին ներկայացնում են որպես անհավասար, անհամարժեք բանավիճող, որի կարծիքը արժանի չէ հավասարազոր քաղաքական քննարկման: Այսպիսի լեզվական շեշտադրումը նպատակ ունի կասկածի տակ դնել կնոջ մտավոր կարողությունները և քաղաքական լեգիտիմությունը:

Ելույթի ողջ համատեքստում լայնորեն կիրառվում են փոխաբերական, ուղիղ և անուղղակի համեմատական, հեգնական, չափազանցված և պաթոսային արտահայտություններ՝ «ղառ-ղառ չեք», «ջադու չեք», «անեծքով եք խոսում», «անեծքները կիրառում էիք», որոնց նպատակը կին քաղաքական գործչի վարկաբեկումն է ոչ քաղաքական լեզվամշակույթի հարթությունում:

Հատկանշական է, որ լրատվամիջոցը, վերարտադրելով ապատեղեկատվությունը որպես չմշակված տեղեկատվություն, գործնականում դառնում է քաղաքական ապատեղեկատվական հոեոտորաբանության ակտիվ տարածող հարթակ, այլ կերպ ասած՝ երկրորդային տարածող: Թեև նման դեպքերում լսարանի

³ Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.aravot.am/2024/03/19/1406707/>: [Մուտք՝ 30.03.2025]

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

վրա ունեցած ազդեցության տեսանկյունից վերջինիս կշիռն ու ազդեցությունը երկրորդային չի կարող լինել: Այսպիսով, կանանց դեմ ուղղված պաթոսային, հեգնական և արժեզրկող լեզուն լրատվամիջոցի միջոցով հանրային շրջանառության մեջ դրվելով՝ շղթայաբար նպաստում է քաղաքական դիսկուրսում կնատյաց դիսկուրսների և գենդերային կարծրատիպերի վերարտադրությանը:

Քննարկենք մեկ այլ օրինակ, որտեղ գենդերի հիմքով ապատեղեկատվական հոետորաբանության դրսևորումներ նկատվում են լրատվամիջոցի կողմից ներկայացրած հոդվածի շրջանկում.

«Աժ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի խումբ կանայք աղմկահարույց նախագծերի փաթեթ են ներկայացրել [...] Զարուհի Բաթոյանը, Սոնա Ղազարյանը և Ծովինար Վարդանյանը փոփոխություններ են առաջարկում [...] Բայց խնդիրը ոչ թե բռնության դեմ պայքարն է, այլ սորոսական որոշ տերմիններ ամրագրելը: Կանայք առաջարկում են ներմուծել «զուգընկեր» հասկացությունը, որով քողարկված պաշտպանության տակ են առնում նույնասեռականներին»⁴

Բովանդակային առումով տեքստը կառուցվում է մի քանի նպատակաուղղված պատումների շուրջ: Նախ, Աժ կին պատգամավորները ներկայացվում են որպես *անանուն կոլեկտիվ՝* իբրև «մի խումբ կանայք», ինչը չեզոքացնում է նրանց անհատական քաղաքական և մասնագիտական գործողությունը:

Հաջորդիվ նախագիծը որակվում է որպես «աղմկահարույց»՝ առանց որևէ հիմնավոր բացատրության, մինչդեռ բուն օրինագծի փաստացի բովանդակությունը չի ներկայացվում: Փոխարենը տեքստը կառուցված է «սորոսական տերմիններ», «քողարկված պաշտպանության տակ», «նույնասեռականներին» մոլորեցնող, պիտակավորող և վախ սերմանող լեզվական միավորների միջոցով: Սա մտաշահարկող հոետորաբանության դասական օրինակ է՝ իրավիճակը քաղաքականացնելու, դավադրության տիրույթ տեղափոխելու և հասարակական վախի դիսկուրս ստեղծելու նպատակով:

Լեզվական առումով տեքստում կիրառվում են *հոմոֆոբ* և *կնապոյաց պատումներ*՝ կին պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունն որպես արտաքին ազդեցությամբ մղված, ազգային արժեքներին և լեզիտիմ օրենսդրական օրակարգին հակասող ներկայացնելու նպատակով:

⁴ Նյութը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://hraparak.am/post/bd9e542e04d7ed3202f9cabb05db227c> : [Մուտք՝ 30.03.2025]

Եզրակացություն

Վերլուծած նյութերն ու օրինակները փաստում են, որ գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան հանրային դիսկուրսում դրսևորվում է ոչ միայն բովանդակային և գաղափարական մակարդակներում, այլև շատ հստակ՝ լեզվական և լեզվաոճական շերտերում: Լեզուն այս համատեքստում հանդես է գալիս որպես առանցքային գործիք՝ կնոջ քաղաքական, մասնագիտական և հանրային լեգիտիմությունը կասկածի տակ դնելու, նրա կերպարը արժեզրկելու նպատակով՝ գենդերային կարծրատիպերը վերարտադրելու միջոցով:

Լեզվաոճական վերլուծության մակարդակում ներկայացված օրինակները վկայում են, որ գենդերային ապատեղեկատվության դիսկուրսում լայնորեն կիրառվում են բազմազան լեզվական ու ոճաբանական հնարներ՝ ուղղված կանանց քաղաքական և հանրային ինքնության արժեզրկմանը: Հատկապես հաճախ կիրառվում են փոխաբերություններ («գողական կոնտենտ», «բակի կանոններ», «ֆրֆռալ»), որոնք կենցաղայնացնում և նսեմացնում են կնոջ արտահայտած կարծիքը կամ դիրքորոշումը: Համեմատությունները և չափազանցությունները («ջադու չեք», «անեծքով եք խոսում», «ղառ-ղառ չեք», «անեծքները կիրառում էիք») հաղորդում են խոսքին ծաղրական և պաթոսային երանգ՝ բացասական ազդեցություն թողնելով հանրային ընկալումների վրա:

Միևնույն ժամանակ, դիտարկվող օրինակումների տեքստերում լայնորեն օգտագործվում են հեգնանք և պաթոս՝ կեղծ հուզականության տեսքով («էդ լո՛ւրջ եք ասում, տիկին Գալստյան», «թերևս այդ առաքելության համար էլ...», «աղմկահարույց նախագծեր»), որոնք նպատակ ունեն թուլացնել կանանց արտահայտած դիրքորոշումների լեգիտիմությունը և քաղաքական ծանրությունն ընկալման մակարդակում: Այս բոլոր լեզվաոճական միջոցները ծառայում են որպես ռազմավարական գործիքներ՝ հանրային դիսկուրսում կանանց քաղաքական, մասնագիտական ու հանրային դերի նվազեցման նպատակով՝ կարծրատիպերի ամրապնդման և կարծրատիպային ընկալումների վերարտադրման միջոցով:

Այս լեզվաոճական տեխնիկաները ոչ միայն թուլացնում են կանանց քաղաքական և մասնագիտական ծայնը, այլև ձևավորում են հանրային ընկալումներ, որոնք վտանգում են գենդերային հավասարության և կանանց իրավունքների վերաբերյալ ձեռքբերումները:

Գենդերային ապատեղեկատվությունը հանրային դիսկուրսում կիրառվում է որպես բազմաշերտ ռազմավարական գործիք քաղաքական պայքարի պայմաններում՝ անկախ այն բանից, թե քաղաքական որ ուժն է դրա նախաձեռնողը կամ թիրախը: Ավելին, մեդիան հաճախ հանդես է գալիս ոչ թե որպես չեզոք տեղեկատվական հարթակ, այլ որպես ապատեղեկատվական հոետորաբանության ակտիվ վերարտադրող և տարածող՝ այսպիսով նպաստելով հանրային հաղորդակցական միջավայրում գենդերային կարծրատիպերի արմատավորմանը:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Գենդերային ապատեղեկատվության ուսումնասիրության մեջ լեզվական ու լեզվաոճական վերլուծությունն առանցքային դեր ունի. հենց լեզուն է այն հիմնական գործիքը, որով ձևավորվում, վերարտադրվում և հանրային ընկալումներում ամրապնդվում են գենդերային կարծրատիպերը, կանխակալ պատկերացումները և կնատյաց հոետորաբանությունը: Ապատեղեկատվական հոետորաբանության նման կառուցվածքային և լեզվական վերլուծությունը կարևոր միջոց է նման երևույթները բացահայտելու և հանրային դիսկուրսում դրանց ազդեցությունը չեզոքացնելու ուղղությամբ հետագա գործողություններ ձևավորելու համար:

Գրականության ցանկ

1. Կոջոյան Ա., Հովհաննիսյան Լ. «Գենդերային ապատեղեկատվությունը հայաստանյան լրատվամիջոցներում», Երևան, 2024, 41 էջ, <https://oxygen.org.am/wp-content/uploads/2025/03/media-monitoring-upd-31-03-25.pdf> (30.03.2025):
2. Demos. “Submission to the UN Special Rapporteur on Freedom of Expression: Threats to Women in the Digital Age”, 2023. 6 p. Available at: <https://www.ohchr.org/sites/default/files/documents/issues/expression/cfis/threats-digital-age/csos/2023-01-26/Submission-SR%20freedex-hrc50-Demos.pdf> (30.03.2025).
3. Di Meco L. “Online Threats to Women’s Political Participation and the Need for a Multi-Stakeholder, Cohesive Approach to Address Them”, 2020. 11 p. Available at: https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/CSW/65/EGM/Di%20Meco_Online%20Threats_EP8_EGMCWSW65.pdf (30.03.2025).
4. EU DisinfoLab. “Gender-Based Disinformation 101: Theory, Examples, and Need for Regulation”, 2022. Available at: https://www.disinfo.eu/publications/monitoring-disinformation-around-elections-key-takeaways-from-the-german-federal-elections-in-2021-2/https://www.disinfo.eu/wp-content/uploads/2022/10/20221012_TechnicalDocumentGBD-2.pdf (30.03.2025).
5. Global Engagement Center. “Gendered Disinformation Tactics, Themes, and Trends by Foreign Malign Actors” U.S. Department of State, 2023. Available at: <https://www.state.gov/gendered-disinformation-tactics-themes-and-trends-by-foreign-malign-actors/> (30.03.2025).
6. Jankowicz N., Hunchak J. et al. “Malign Creativity: How Gender, Sex, and Lies Are Weaponized Against Women Online”, 2021. 61 p. Available at: <https://www.wilsoncenter.org/publication/malign-creativity-how-gender-sex-and-lies-are-weaponized-against-women-online> , (30.03.2025).
7. Kovacs A. “Gendered Disinformation: 4 Ways Misinformation and Falsehoods Target Women Online”, 2021. CHAYN. Available at: <https://chayn.co/resources/gendered-disinformation> (30.03.2025).
8. Litosseliti L. “Gender and Language: Theory and Practice”. Routledge, 2013. 201 p.
9. Pennycook G., Rand, D. G. “Fighting Misinformation on Social Media Using Crowdsourced Judgments of News Source Quality”, 2021. PNAS, 118(19). DOI:10.1073/pnas.2024514118, Available at <https://www.pnas.org/doi/10.1073/pnas.2024514118> (30.03.2025).

10. UN Women. “Gendered Disinformation: Misinformation and Harassment Targeting Women in Politics”, 2022. Available at <https://www.unwomen.org/en/news/stories/2022/03/news-gendered-disinformation-in-politics> (30.03.2025).

***GENDER DISINFORMATION IN PUBLIC DISCOURSE
(ANALYSIS BASED ON ARMENIAN CASE STUDIES)***

Ani Kojoyan

Yerevan State University,

Department of Translation Theory and Practice

akojoyan@ysu.am

Abstract

In recent decades, gender disinformation has become a significant topic for discussion within the scope of academic research, as it increasingly serves as a strategic tool in public and political discourses. It has its expressions not only at ideological and content levels but also through semantic, linguistic and stylistic dimensions. This article aims at analyzing the discourse, linguistic and stylistic features of gender disinformation by examining cases from Armenian public and political discourses.

The analysis is based on case studies of political speeches, media publications, and journalistic texts, targeting women politicians and women active in public spheres. Methodologically, the study applies a combined approach of critical discourse analysis and stylistic analysis.

The findings demonstrate that gender disinformation discourse widely employs rhetorical strategies and stylistic devices such as metaphor, simile, hyperbole, irony, pathos, negative labelling, and stigmatization. These techniques contribute to undermining women’s political and professional legitimacy while perpetuating gender stereotypes and reinforcing patriarchal narratives in public perception.

Notably, gender disinformation is strategically used by representatives of various political forces, targeting each other irrespective of ideological differences. Moreover, the media often serves as an active reproducer and amplifier of such rhetoric. Linguistic and stylistic analysis therefore proves to be a vital instrument for identifying these phenomena and fostering critical awareness in public communication, thereby supporting efforts to promote gender equality and democratic values.

Keywords: *gender disinformation, critical discourse analysis, public discourse, stylistic analysis, woman politician, gender stereotypes.*

Ներկայացվել է՝ 09.04.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 25.05.2025թ.